

ՖԻՐՄԱՎ Ա. Ի.

ՏՆՏԵՍԵԼ ԱՇԽՈՐԵՐԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ АСНИ
Академии Наук
СССР

Բնագրվ. 2. Ս. յիվ 9. 9.

338.14

Ջ-65



ՀՐԱՅԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ «ՅՅՈՒՍԻՍՅԱՅԻՆ ԿՈՎՎԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՆԵ 1933

CA 495

ՖԻՐՄԱԿ Ա. Ի.

17 FEB 2010

338.14

3-65

**ՏՆՏԵՍԵԼ ԱՇԽՈՐԵՐԸ
ԿՈԼՏՆԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բարձր. 2. Մ. յնվ 4. 4.



61179-67

ՀԲԱՅԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈԼԵԿՑԻՆ
ԲՈՍՏՈՆԻ-ԳՈՆ 1937

№ 6 SEP 2013

ՅՍ. ԾՁ. Ե



Книгоиздательство
„Северный Кавказ“

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ ԱՍՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Կոմունիստական կուսակցության ղեկավարութեամբ բան-
վոր զասակարգի պարբերաբար մղվող պայքարի հեռավան-
քով, Սորհրդային Միութեան մեջ զբվել և սոցիալիստական
հասարակութուն կառուցելու ամուր հիմքը:

Սորհրդային Միութունը հետաճաց գյուղատնտեսական
չերկրից վերածվել և բարձր զարգացած արդյունաբերու-
թեամբ ինդուստրիալ չերկրի: Սոցիալիստական ինդուստրա-
ցումը հնարավորութուն տվեց զինելու մեր գյուղական
տնտեսութունը զարգացած բարձր տեխնիկայով: Գյուղա-
տնտեսութեան մեջ մտցված են հարյուր հազարավոր տրակ-
տորներ, կոմբայններ, տրակտորային կցորդ ինվենտար:
Այդ մեքենաներն այժմ հանդիսանում են գյուղատնտեսու-
թեան մեջ արտադրութեան հիմնական զործիքները:

Գյուղատնտեսութունը հիմնավորապես վերակառուցվեց:
Մենք հիմնականում ավարտեցինք համատարած կոլեկտիվա-
ցումը և այդ հիման վրա կուլակութեան վերացումը, վոր-
պես զասակարգի: Վերջին չերեք տարիների ընթացքում
ԽՍՀՄ-յան մեջ ստեղծվել են ավելի քան 209 հազար կոլ-
տնտեսութուններ, վորոնք ընդգրկել են գյուղացիական
տնտեսութունների ավելի քան 60 տոկոսը: 1932 թվակա-
նին կոլտնտեսութունները ցանեցին ավելի քան 90 մի-
լիոն հեկտար հող: Կազմակերպված են 5 հազար խորհան-
տեսութուններ:

Խորհրդանոտեսություններն ու կոլտնտեսություններն ընդ-
գրել են բոլոր ցանքատարածությունների մոտ 80 տոկոսը
և նրանք հանդիսանում են գյուղատնտեսական միջերջների
հիմնական արտադրողները:

Հյուսիսային կովկասում խորհրդանոտեսությունների և կոլ-
տնտեսությունների ցանքսերը 1932 թվին կազմում էին
92 տոկոս, իսկ մենատնտեսներինը—8 տոկոս: 1933 թվա-
կանին խորհրդանոտեսությունների և կոլտնտեսությունների
ցանքսերը կազմելու յեն 95,6⁰/₀, իսկ մենատնտեսներինը—
միայն 4,4%: Այդ վկայում է, վոր ԽՍՀՄ և մեր յերկրա-
մասն արդեն վերջնականապես ամրապնդվել են գյուղատն-
տեսության զարգացման սոցիալիստական ուղիների վրա:

Դասակարգային թշնամին և նրա ոպորտունիստական
գործակալությունը զանազան ֆուստարարական միջոցների
գործադրությամբ ունեյին միայն մի նպատակ—Թուլացնել
Խորհրդային Միությունը տնտեսապես և հեշտացնել նրա
դեմ կապիտալիստական յերկրների ինտերվենցիան: Ա-
հայն այդ նրան չհաջողվեց:

Սոցիալիստական սեկտորի՝ խորհրդանոտեսությունների և
կոլտնտեսությունների հաղթանակն ամրոջովին Չախջա-
խեց դասակարգային թշնամիների հաշիվները մեր
յերկրի սոցիալիստական շինարարությունը խորտակելու
առթիվ:

Չնայած կոլեկտիվացում անցկացնելու դեմ կուլակային
և հակահեղափոխական տարրերի ունեցած կատաղի դիմա-
դրության, չնայած աջ ոպորտունիստների —կուսակցու-
թյան կուլակի հետ հաշտ գործակցելու փորձերին, կուսակ-
ցությունը յուժեց գյուղատնտեսության սոցիալիստական
վերակառուցման պատմական մեծ կարեվորություն ունե-
ցող խնդիրը:

Կոլտնտեսությունները վերջնականապես և ընդմիջա-
հաղթահարեցին: Կոլտնտեսություններն ըստ արտադրու-
թյան դարձան մեր Միության տնտեսության հիմնական և
վճռական ուժը:

«Այժմ արդեն խնդիրը կոլտնտեսությունների լինելու
կամ չլինելու մասին չէ:

Այդ հարցն արդեն յուժված է դրականապես: Կոլտնտե-
սություններն ամրապնդված են:

Ուղին դեպի հին անհատական տնտեսությունը փակ-
ված է վերջնականապես» (ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ հուճ-
վարյան պլենումում արած ընկ. Ստալինի ղեկուցումից):

Մահայն կուլակության հիմնականում վերացումը, վոր-
պես դասակարգի, դեռ չի նշանակում, վոր վերացված են
կուլակության մնացորդների ամեն տեսակ փորձերը՝ խան-
գաբելու կոլտնտեսային շինարարությունը: Ոգովելով մի
քանի գյուղական կուսակազմակերպությունների քաղաքա-
կան կարճատեսությունից և դասակարգային զգոնության
բթանալուց և առանձին կազմալուծված կոմունիստների
ուղղակի ոգնությունից, կուլակության և հակահեղափոխա-
կան սպիտակ զվարդիականների մնացորդները, մանավանդ
Կուբանի ռայոններում, կազմակերպեցին սարտաժ այնպի-
սի կարեվորագույն տնտեսական-քաղաքական միջոցառում-
ների, ինչպիսին են՝ աշնանացանը և հացամթերման պլան-
ների կատարումը:

«Այն միջոցառումներն, այն մեծագույն արտոնություն-
ները, վորոնք տրված են վերջին ժամանակներս կոլտնտե-
սությունների և աշխատավոր մենատնտեսների—կոլտնտե-
սային առևտրի թուլյությունը, վորը հնարավորություն
է տալիս վաճառելու մթերքների մի մասը ավելի բարձր
գներով, քան պետական գներն են, դրանով իսկ ավելաց-
նելով կոլտնտեսությունների և կոլտնտեսականների դրա-
ժական ռեսուրսները, հացի և մսի մթերման պլանի պակա-
սեցումը, անհատական անասնաբուծության, յուրաքանչյուր
կոլտնտեսականի և աշխատավոր մենատնտեսականի տան
կից անտեսության բարձրացման—այս բոլոր միջոցները
կուլակությունը համարեց վորպես խորհրդային իշխանու-
թյան զիջում, վորպես խորհրդային իշխանության թու-
լություն, և վորոշեց փորձել հուպ տալ: Յեթե խորհրդային

իշխանութիւնը թույլ ե, հուպ տանք, կազմակերպենք սա-
բոտած, չցանկենք. հացը չհնձենք և ստիպենք քաղաքներէ
բանվորներին մնալ սոված: Գուցե ելի զիջումներ կորզենք,
գուցե և փորձենք, թե վճիռն ամուր ե խորհրդային իշ-
խանութիւնը, կղեմանն արդյոք այդ սաբոտաժին, թե
վոչ: Այսպես ե այժմ դասակարգային պայքարի մեխանիկան»:
(ՇԵՐՈՒՂԱՅԵՎ)

Ոգտագործել հետամնաց կոլտնտեսականների և մենա-
տնտեսականների մանր-սեփականատիրական տրամադրու-
թյունները, կուլակային թափթփուկներին հաջողվեց շատ
տեղերում լքել աշխատանքային կարգապահութիւնը և
բարեխիղճ վերաբերմունքը դեպի կոլեկտիվ տնտեսութիւ-
նը: Յեթե առանձին կոլտնտեսականներն ունեցել են ամ-
բողջ տարվա ընթացքում 10—15-ական աշխոր, այդպիսի
աշխատանքն աշխատանք չէ: Իսկ այդպիսի կոլտնտեսա-
կանների թիվը շատ մեծ ե Կուբանի կոլտնտեսութիւննե-
րում: Առանձին կոլտնտեսութիւններում այդպիսիները
կազմում եյին աշխատունակների կազմի մոտ յերրորդ մա-
սը, իսկ սև տախտակին հանած կոլտնտեսութիւններում՝
դրանից ել ավելի: Որինակ, Տիմաշեվսկայա ստանիցայի
«Սաբոլոդ» կոլտնտեսութիւնում 400 աշխատունակներից
աշխատանքի եյին դուրս գալիս 100—125 հոգուց վոչ ա-
վելի, վորոնցից դաշտային աշխատանքներին մասնակցում
եյին շատ քչերը:

«Յերը մենատնտեսականն աշխատում եր իր համար,
նա քրտնաթոր աշխատում եր վողջ տարին՝ թե լավ և թե
վատ յեղանակին: Ամբողջ ընտանիքը՝ մեծից՝ մինչև փոքրը
աշխատում եր մի կտոր հաց ունենալու համար: Յեվ ահա,
յերը մենատնտեսականը փոխադրվեց կոլտնտեսութիւն,
կուլակը, յենթակուլակը, ոգտագործելով կոլտնտեսականի,
յերեկվա մենատնտեսականի սեփականատիրական հողերա-
տութիւնը, անում ե ամեն ինչ աշխատանքային կարգա-
պահութիւնը լինելու համար, սովորեցնում ե աշխատել վոչ
իբրե իր տնտեսութիւն համար, այլ վորպես ուրիշի, սո-

փորեցնում ե աշխատել քիչ, աշխատել վատ: Յերը տես-
նում ենք մենատնտեսականի ազարակը, աչքի յե ընկնում,
վոր նրա անձնական բանջարանոցը հիանալի կերպով՝ մը-
շակված ե, իսկ կոլտնտեսային դաշտերը հաճախ գտնվում
են խայտառակ դրութիւն մեջ»:
(ՇԵՐՈՒՂԱՅԵՎ)

Կասկած չկա, վոր կուլակների կարեւորագույն քաղա-
քական կամպանիաների այդ սաբոտաժը, վորն ուղղված ե
կոլտնտեսային շինարարութիւնը քայքայելու համար, վե-
բացվելու յե և արդեն վերացվում ե: Խորհրդային իշխանու-
թիւնը աշխարհիս ամենամուր իշխանութիւնն ե և չի
թույլ տա կուլակային թափթփուկներին վիժեցնելու գյու-
ղատնտեսութիւն վերակառուցումը սոցիալիստական սկզ-
բունքներով: Սակայն այդպիսի սաբոտաժի առաջ գալը
պարտավորեցնում ե տեղական կուսակցական և կոլտնտե-
սային կազմակերպութիւններին, նույնպես և յուրաքան-
չյուր առանձին իսկպես կոլտնտեսային գործին նվիրված
կոլտնտեսականներին ամբողջ ուժադուրքուք կենտրոնաց-
նել կուլակային մնացորդների զեմ մղվող պայքարի վրա,
կոյեմեստոյութիւնների կազմակերպական-օհեստական ամբա-
պնդման վրա և կոլտնտեսութիւններում նոր աշխատանքա-
յին կարգապահութիւն ստեղծելու վրա:

Հողժողովում ընկ. Յակովլեվը ԽՍՀՄ Կենտրոնական յերրորդ
սեսիային իր զեկուցման մեջ ասաց—«կոյեմեստոյութիւններում
օհեղծելու նոր աօխաճանային կարգապահութիւն, նոր
կոյեմեթիվ աօխաճանի կարգապահութիւն, այդ գիտեկից կոյ-
եմեստականների կարգապահութիւն յանդիք ծառացել ե, վօր-
պես կոյեմեստային տրադիցիայան կազմակերպման կարեւոր
յեվ ամենամիմնական յանգիքներից մեկը»:

Լենինը սոցիալիստական հասարակութիւնն անդժելու և
կառուցելու մեջ աշխատանքային կարգապահութիւն ամ-
բապնդման գործին մեծ նշանակութիւն եր տալիս. նա աս-
ում եր.—

«Մարդկային պատմութիւն մեջ այս վեթիւրի փոխան-
ցումը—հարկադիր աշխատանքից ազատ աշխատանքի, չի
7

կարող տեղի ունենալ՝ առանց ընդհարումների, զժգարու-
թյունների, առանց ստիպողականութեան ունակացած ձրիա-
կերների յեվ նրանց արբանյակների վերաբերմամբ»

Հետևապես չի կարելի նոր աշխատանքային կարգա-
պահութիւն ստեղծել՝ առանց ստիպողականութեան դեպի
արմատացած ձրիակերների և նրանց թափթփովների
վերաբերմամբ: Յեվ հետո ընկ. Լենինն ասում է...

«Պետք է ամրապնդել այն, ինչ մենք ինքներս ենք ձեռք
բերել, ինչ հրահանգել ենք, որենք ենք դարձրել, ջննար-
կել ենք, նշել ենք—ամրապնդել և դարձնել ամենորոյա աշ-
խատանքային կարգապահութեան կայուն ձեւեր»:

Յեվ դա բոլորովին ճիշտ է, վորովհետեւ մեզ մոտ շատ
կոլտնտեսութիւններում աշխատանքային կարգապահու-
թեան գործն այնքան եւ բարեհաջող չէ:

«Մեզ մոտ կոլտնտեսութիւններում քիչ չեն այնպիսի-
ները, վորոնք նայում են կոլտնտեսութիւնների վրա նախ
և առաջ այս տեսակետից. «քանի վոր յես մտել եմ
կոլտնտեսութեան մեջ, նշանակում ե յես պետք է աշխա-
տեմ ավելի քիչ, իսկ իմ հարեվանը պետք է աշխատի ավե-
լի շատ, իսկ քարշել այնտեղից և ստանալ ինձ պետք է
ավելի, իսկ հարեանիս—քիչ»: Այդպիսի մարդիկ դեռ շատ
կան համարյա յուրաքանչյուր կոլտնտեսութիւնում: Դա
այնպիսի մարդկանց հոգեբանութիւնն է, վորոնք մտնելով
կոլտնտեսութիւնները, պահպանել են դեռ մասնավոր
սեփականատիրական շատ սովորութիւններ. այդ հոգեբա-
նութիւնը դեռ շատ անգամ պիտի փչացնի գործը կոլտն-
տեսութիւնում»:

(ՅՍ.ԿՈՎԼԵՎ)

Աշխատանքային կարգապահութեան բացակայութեանը
կոլտնտեսութիւններում, անփութութեանը, կորդողութիւ-
նը, աշխատանքի կազմակերպման և հաշվառքի անկարգու-
թիւնը տանում են կոլտնտեսութիւնները դեպի խորտա-
կում և ոգնում են դատակարգային թշնամուն՝ կուլակին և
նրա թափթփովներին—կորգիչներին, ծուլերին, սպեկուլ-

յանտներին, գողերին: Ամուր աշխատանքային կարգապա-
հութեան բացակայութեանը, խառնաշփոթ հաշվառումը հը-
նարավորութիւն են տալիս նրանց չաշխատելով, կամ մի
կերպ աշխատելով ստանալու բարեխիղճ կոլտնտեսականների
աշխատանքով ձեռք բերված մթերքները: Իսկ դա ավելի
յե քայքայում աշխատանքային կարգապահութիւնը, հե-
տաքրքրութիւնը դեպի բարձր արտադրանքը, զարգաց-
նում է վոչ հարադատ վերաբերմունք դեպի կոլտնտեսային
ունեցվածքը: Իսկ դա հենց այն է, ինչ վոր պետք է դա-
տակարգային թշնամուն կոլտնտեսութիւնը կործանելու
համար:

ՉԿՐԿՆԵԼ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԻՍԼՆԵՐԸ

Խորհանտեսութիւնների, ֆաբրիկների, գործարանների,
վորպես հետեւողական-սոցիալիստական տիպի ձեռնարկու-
թիւնների, յեկամոտները պատկանում են պրոլետարա-
կան պետութեան, այդ պատճառով և այդ ձեռնարկութիւ-
ններում աշխատող բանվորների աշխատանքը վարձատրվում
է աշխատավարձի ձեւով: Կոլտնտեսութիւններում, վորը
հանդիսանում է «իրենց՝ դյուրացիների միջոցներով ստեղծ-
ված ձեռնարկութիւն» (ՅԿՈՎԼԵՎ), յեկամուտը պատկա-
նում է կոլտնտեսականներին, վորոնք իրենց կոլտնտեսութեան
կոլեկտիվ սեռն են: Այդ պատճառով կոլտնտեսութիւնում չի
կարող այնպիսի գրութիւն լինել, վոր նրա անդամներն
աշխատելու վարձվեն իրենց կոլեկտիվ տնտեսութեան մեջ,
հետեւյապես կոլտնտեսութեան մեջ չի կարող աշխատավարձ
լինել:

Այս պատճառով կոլտնտեսութիւնում նրա անդամների
աշխատանքի վարձատրութիւնը պետք է կատարվի միայն
ստացված յեկամոտների բաշխման ձեւով, պետութեան ա-
ռաջ ունեցած պարտավորութիւնները կատարելուց հետո:
Կոլտնտեսականների միջև յեկամոտների (դրամական և
քնամթերքային) բաշխման չափն ամբողջապես կախված է

նախ և առաջ իրենց՝ կոլտնտեսականներն աշխատանքի հաջողութիւննից: Կոլտնտեսականներն միջև բաշխելու համար, կոլտնտեսութեանը ուրիշ միջոցներ, բացի բերքից և կոլեկտիվ արտադրութեանից ստացված յեկամուտներից, չի կարող ունենալ: Իսկ կոլտնտեսութեանների և տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպութեանների ղեկավարները հաճախ դասակարգային թշնամու—կուլակի և նրա գործակալների թելադրանքով թույլ են տալիս կոլտնտեսային յեկամուտների բաշխման մեջ շատ կուպիտ շեղումներ:

Մասնավորապես այդպիսի շեղումների որինակ և հանդիսանում մի շարք կոլտնտեսութեաններում կոլտնտեսականներին աշխատավարձի անցկացնելու փորձերը:

Այդ պատճառով կուսակցութեան Կենտկոմը «կոլտնտեսութեանների կազմակերպչական-տնտեսական ամբաջման հերթական միջոցառումների մասին» իր վորոշման մեջ, մեկ անգամ ել «նախագգուցանում և կոլտնտեսականների աշխատանքը դրամով վարձատրելու փորձերի դեմ» (ՀԿ (բ) Կ Կենտկոմի 1932 թ. փետվարի 4-ի վորոշումներից):

Ավելի հաճախ են խորհրտնտեսային բանվորների մատակարարման պրակտիկան կոլտնտեսութեանները փոխադրելու դեպքերը: Որինակ, Անապայի ռայոնի մի կոլտնտեսութեանում, վարչութունը սահմանել և հացի մատակարարման որական նորման—դաշտային և տնային (ծանր) աշխատանքների համար 80 գր., հասակավորներին տանը՝ 600 գրամ, հասակավոր անաշխատունակներին 400 գր., անչափահասներին 200 գր.: Գեյլենշիկի ռայոնի «Նաշ Տրուդ» արտելում մտցրել են ամսական նորմաներ՝ աշխատունակներին—16 կիլոգրամ, անաշխատունակներին—12 կիլոգրամ և այլն: Այն, վոր մի տեղի նորմաներն որական են, իսկ մի ուրիշ տեղ—ամսական, դրանով եյութեյունը չի փոխվում: Դա այնպես չի դնում զործը, վոր մատակարարումը կտրված լինի աշխատանքի քանակից ու վորակից: Դա իսկական կուլակային հավասարեցում և, վորը հնարավորութեան

և տալիս հանգիստ ապրելու և չաշխատելու ծուլերին, կորդիչներին և զողերին:

Քիչ և տարբերվում մատակարարման հիշած միջոցներից յեկամտի բնամթերքային մասի բաշխումը կուլակի թելադրանքով—ըստ շնչի, ծխի և այլն: Բելոգլինսկու ռայոնի «Նոյեմբերի 7-ը» կոլտնտեսութեանում, յեկամուտների ըստ շնչի բաշխման հետևանքով, մեծ թվով ընտանիքի անդամներ ունեցող կոլտնտեսականներն ստացան մի աշխուրվա համար չորսական և ավելի կիլոգրամ, իսկ ընտանիքի քիչ թվով անդամներ ունեցող աշխատասեր կոլտնտեսականներին մեկական կիլոգրամ ել չհասավ: Ավելի վատ, ուղղակի կուլակային յեղանակով մոտեցան հողի միասնական մշակման Գուդերմիսի «Տրուդովայ Ձեչնյա» ընկերութեան մեջ. ամբողջ կարած ցորենը բաժանեցին ըստ ծխերի: Յուրաքանչյուր տնտեսութեան ստացավ 25-ական փութ, ուշադրութեան չառնելով, թե այդ տնտեսութեանից վորեւ մեկն աշխատել և կոլտնտեսութեանում, թե վոր:

Կոլտնտեսականներին կայուն նորմայով և յեկամտի բնամթերքային մասի ըստ շնչերի և ծխերի մատակարարման կարգը հավասար չափով վնաս և հասցնում կոլտնտեսութեանների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործին: Կոլտնտեսութեաններում աշխատանքի վարձատրման այդպիսի ձևերի դեմ վճռական պայքար պետք և մղել, ինչպես կոլտնտեսային շինարարութեանը վիժեցնելու կուլակութեան մնացորդների բացարձակ փորձի դեմ:

Կոլտնտեսութեաններում և՛ դրամական և՛ բնամթերքային յեկամուտների (պարենի, հացահատիկի, Ֆուրաժի, անասնարուծական, բանջարանոցային և այլ մթերքների) միակ ճիշտ և նպատակահարմար բաշխման ձևն այն և, յերբ յուրաքանչյուր կոլտնտեսական նյութապես շահագրգռված և աշխատանքի բարձր արտադրողականութեամբ, աշխատանքի լավ վորակով: Այսպիսի ձևն և—բաշխել կոլտնտեսային յեկամուտներն ըստ աշխուրբի, այսինքն՝ ըստ առանձին կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակի և վորակի:

ԱՇԻՈՐՆ—ԱՇԻԱՏԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆ Ե

Կոլտնտեսութեան շատերը կոլտնտեսային շինարարութեան սկզբնական ժամանակաշրջանում փորձում ելին աշխատանքի հաշվառումը կատարել դրամական արտահայտիչներով, գնահատելով աշխատանքը «պայմանական» բուրլիներով և կոպեկներով ճիշտ այնպես, ինչպես, յի՛թե այդ աշխատանքը վարձատրվեր դրամով: Որինակ, մեկ հեկտար վարելու համար—գութանավարին տրվում էր 1 բուրլի, քրդին 75 կոպ., 1 հեկտար տափանելու համար—20 կոպ. և այլն: Աշխատանքի այդ ձևով գնահատումը զանազանվում էր դրամական աշխատավարձից միայն նրանով, վոր պայմանորեն հաշվված բուրլիներն ու կոպեկները վճարվում էին տարեվերջին՝ վոչ թե մի բուրլու համար մի բուրլի, այլ նայած բաշխման հատկացված միջոցներին: Յեկամուտների բաշխման մեծ ֆոնդ ունենալու դեպքում, կարող էր մի բուրլու համար ստացվել մի բուրլուց ավելի և, ընդհակառակը,—պակաս:

Սակայն աշխատանքի հաշվառման այդ ձևը շուտով ցույց տվեց իր անպետքութեանը, քանի վոր այդպիսի սխառեմը չի համապատասխանում կոլտնտեսային բնույթին: Այդպիսի ձևի դեպքում ոգտվելով կոլտնտեսային շինարարութեան ելութեանը վատ հասկացող կոլտնտեսականների մի մասի հետամնացութեանից, կուլակութեանը հաճախ հաջողվում էր համոզել քիչ գիտակից կոլտնտեսականներին, վոր նրանք կոլտնտեսութեանում հանդիսանում են, վորպես «վարձկան բան վորներ», ուստի պետք է, վոր նրանք ստանան բարձր աշխատավարձ, հող չափանելով կոլտնտեսային տնտեսութեան դրութեան մասին:

Նույնպես անընդունելի յեր յեկամտի բաշխումն ըստ կատարված աշխորերի քանակի:

Աշխատանքի որական հաշվառման ձևը, յերբ հաշվի յեր առնվում միայն աշխատանքի վրա ծախսված ժամանակը,

այլ վոչ կատարված աշխատանքի քանակն ու վորակը, վոչ մի կերպով չեր նպաստում աշխատանքի արտադրողականութեան և վորակի բարձրացման:

Աշխատանքի որական հաշվառման ձևը, դա կուլակային ձև է, շիրմ է ծուլիերի և կորզիչների համար, վորոնք ձրգտում են քիչ աշխատել և վորքան կաբելի յե շատ կորզել հասարակական աշխատանքի հաշվին: Որավարձի դեպքում, աշխատասեր կոլտնտեսականը կորցնում է աշխատանքի արտադրողականութեան բարձրացման վերաբերյալ իր շահագրգռվածութեանը: Աշխատանքի հաշվառման որակարձային ձևը և յեկամուտների բաշխումն ըստ կատարված աշխորերի քանակի, մերժված են իրենց՝ կոլտնտեսականների կողմից, վորպես կոլտնտեսային շահերին հակասող:

Լավագույն կոլտնտեսականների գործնական աշխատանքն ապացուցեց, վոր ավելի կենսունակ և ավելի արագ զարգացող դուրս յեկան այն կուլիկտիվ տնտեսութեանները (արտելները, կոմունաները), վորոնք կարողացան կապակցել կոլտնտեսականի անձնական շահագրգռվածութեանը նրա աշխատանքի արդյունքների հետ: Արդեն կուլիկտիվացման առաջին ետապում սակավ էին այն կոլտնտեսութեանները, վորոնք առանձին միջոցով—աշխորերով, աշխատանքային միավորներով, փայերով և չափելու այլ միավորներով էին հաշվում կոլտնտեսականների աշխատանքը և դրանց համաձայն բաշխում յեկամուտները:

Նետագայում անհետաձգելի անհրաժեշտութեանը դարձավ առաջնակարգ կոլտնտեսութեանների փորձը փոխադրել նին և նոր կազմակերպվող կոլտնտեսութեանները, իսկ դրա հետ միասին և որենք դարձնել կոլտնտեսութեաններում իրեն արդարացրած աշխատանքի հաշվառման ձևը:

Կոլտնտեսներուն աշխատանքի քանակի և վորակի հաշվառման պայմանական միավոր է ընդունել աշխորը: Կորտնտեսութեան յեկամուտը պետք է բաշխվի, համաձայն կոլտնտեսականին նրա կատարած աշխատանքի համար հաշվված աշխորերի քանակի:

ԱՇԽՈՐԵՐԸ ՅԵՎ ԿՈՆՏՆԵՍՏԱՆՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱ- ԿԵՐՊՉԱԿԱՆ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՈՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոնտնտեսություններում աշխոր մտցնելը հնարավորություն տվեց սահմանելու աշխատանքի հաշվառման և յեկամուտների բաշխման միակ ճիշտ սխտեմը և իրականացնել կոլտնտեսականի ուղղակի շահագրգռվածությունը իր աշխատանքի արդյունքներով:

Աշխորերը վորպես աշխատանքի քանակի և վորակի չափման պայմանական միավոր, արդեն ամուր կերպով հաստատվել է կոլտնտեսությունների աշխատանքի պրակտիկայում, յուրաքանչյուր կոլտնտեսական դրանով շահագրգռված է և բարձր և գնահատում:

Առաջավոր կոլտնտեսականները ըստ աշխորերի աշխատանքի հաշվառման և յեկամուտների բաշխման սխտեմում տեսնում են կոլտնտեսային շինարարության ամուր հիմքը, վորի կիրառումով կուլակն ու ծուլը հնարավորություն չեն ունենա ոգտվելու բարեխիղճ կոլտնտեսականների աշխատանքի արդյունքներով, ինչպես այդ լինում էր աշխատանքն ուրիշ ձևերով վարձատրելիս: Այդ սխտեմը հնարավորություն չի տալիս կորզիչներին և ծուլերին քայքայիչ կերպով ազդելու մյուս կոլտնտեսականների վրա և իրենց ել ստիպում է վերադաստիարակվել և բարեխիղճ աշխատավորներ դառնալ: Այդ պատճառով կոլտնտեսային շինարարության համար պայքարող և հավատարիմ հարվածայինների շարքերն որեցոր ավելանում են: Նրանց կազմակերպող ազդեցությունը մնացած կոլտնտեսականների վրա նույնպես որեցոր ուժեղանում է: Այս բոլորը ցույց է տալիս, թե ինչ հսկայական նշանակություն ունի աշխորերը կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման դործում աշխորերի ունեցած հսկայական նշանակությունը պարտավորեցնում է ղեկավարներին ա-

ռանձին ուշադրությամբ և խնամքով բացատրել կոլտնտեսականներին աշխորերի նշանակության մասին, ուժեղացնելով աշխատանքի կարգապահությունը, բարձրացնելով նրա արտադրողականությունը և կոլտնտեսության յեկամուտը, ամեն կերպ բարձրացնելով նրա արժեքն ու հեղինակությունը կոլտնտեսականների յայն խավերի աչքում և աշխորը, ինչպես նաև սոցիալիստական սեփականություն հանդիսացող հասարակական այլ գույքը հափշտակումներից: Մինչդեռ կոլտնտեսությունների և տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների շատ ղեկավարներ աշխորերով աշխատանքի հաշվառում կատարելու միակ ճիշտ սխտեմն ամրապնդելու փոխարեն, հաճախ իրենք են խախտում այդ իրենց սխալ ղեկավարությամբ:

Վերցնենք, որինակի համար, ընկ. Վորոշիլովի անվան կոմունան (Ռոստովի արվարձան): Այդ կոմունայի կոմունարները 1932 թ. յեկամուտները շարունակում էյին ստանալ աշխորերից անկախ Որինակ՝ կոմունար Գ. Լեչչենկոն մինչև ապրիլի 1-ը յուրաքանչյուր աշխորի համար ստացավ մթերքներիով և դրամով 1 ր. 08-ական կոպ., կոմունար Իվան Լիսովկինովը—3 ր. 65-ական կոպ., Ռոդիոնովը—2 ր. 80-ական կոպ., Մուսիյենկոն—2 ր. 33-ական կոպ. և այլն:

Կոլտնտեսականներ՝ Լեչչենկոյի, Լիսովկինովի, Մուսիյենկոյի աշխորերի համար ստացած գումարների մեջ յեղած մեծ տարբերությունը յեղել և այն պատճառով, վոր կոմունայի վարչությունը առանց հաշվի առնելու նրանց աշխատանքն աշխորերով, տվել էր նրանց դրամով և մթերքներիով կանխավճարներ, հենց դրանով պցելով կոլտնտեսությունում աշխորի, վորպես կոլտնտեսականների աշխատանքի չափանիշի հեղինակությունը:

Այդ պատճառով ընկ. Յակովլեվն ասում էր հետևյալը. «Յ. թե մենք յուրջ կերպով պայքարում ենք կոլտնտեսային տնտեսությունների կարգավորման համար, յեթե մենք ուզում ենք ներկա տարում շատ ավելի խիստ, քան անցյալ տարի կանոններ անցկացնել, վորոնց շնորհիվ

հացը բաշխվելու յե ըստ աշխորերի, առանձին կոլտնտես-
սականների աշխատանքի քանակին և վորակին միանգամայն
համապատասխան, ապա դրա համար պետք է վոչ միայն
աշխորերով ճիշտ գնահատումներ սահմանել՝ տարբեր աշխա-
տանքների համար, վոչ միայն ճիշտ կերպով գործնականոր-
բն մշակել արտադրանքի նորմաները, վոչ միայն կրճատել
վարչական ծախսերը և վերացնել կոլտնտեսություններից
մասնավոր մարդկանց հաց տալը, վորովհետև դա պրոպագան-
դիայի յե յենթարկում հացի ծախսիսմը»:

ՎԵՐՋ ՏԱԼ ԱՇԽՈՐԵՐԻ ՎԱՏՆՄԱՆ

Կոլտնտեսություններում աշխորերի վատնումը սովորա-
բար կատարվում է յերեք ուղղությամբ. առաջինը՝ չափից
գուրս ուղցրած վարչական և սպասարկող կազմի աշխատա-
վարձով, ըստ վորում հաճախ ավելի բարձր աշխատավար-
ձով համեմատած արտադրողների հետ, յերկրորդը՝ զանա-
զան հասարակական աշխատանքների վարձատրմամբ և յեր-
րորդը՝ արտադրական աշխատանքներում աշխորերն առանց
հսկողության վատնելով, այլ և այսպես կոչվող տնտեսական
աշխատանքների և նորմավորման դժվարությամբ յենթարկ-
վող աշխատանքների վարձատրությամբ:

Կոլտնտեսություններում վարչական, սպասարկող և
տնտեսական կազմը հաճախ քանակով ավելի յե կոլտն-
տեսային կազմակերպությունների կազմից սահմանված
նորմաներից: Վերջիննք, որինակի համար, «Կրասնիյ կոլոս»
կոլտնտեսությունը (Սևաստի ուայոն): Այս կոլտնտեսության
մեջ 120 աշխատողականներից միայն վարչության մեջ զբաղ-
ված են 7 հոգի, իսկ արտադրության անմիջական աշխատանք-
ներից ազատված սպասարկողների հետ միասին՝ 10—12
հոգի: Իսկ յեթե նկատի առնենք, վոր ամեն որ աշխատանք-
ներին մասնակցում են 65—70 հոգուց վոչ ավելին, ապա
դուրս կգա, վոր աշխատանքներին մասնակցող կոլտնտեսա-
կաններին ընկնում է մինչև 17% սպասարկող կազմ:

Առանձին կոլտնտեսություններում և առանձին ժամա-
նակամիջոցներին սպասարկող կոլտնտեսականների կազմի և
արտադրության մեջ գտնվողների միջև փոխ հարաբերու-
թյունն ավելի մեծ է լինում: Այսպես, Տագանրոգի ուայոնի
«Լենինյան ուղի» կոլտնտեսության յերրորդ բրիգադում,
գարնանացանի աշխատանքներին մասնակցում է յին 34 հոգի,
իսկ սպասարկում է յին 17 հոգի, այսինքն՝ յուրաքանչյուր
2 արտադրող աշխատողին ընկնում էր 1 վոչ արտադրական
աշխատող: Ինչ ի՞նչպիսի աշխատողներից է բաղկանում վարչա-
կան և սպասարկող կազմը, ցույց է տալիս Սլավյանսկու
ուայոնի Տրունդելյի անվան կոմունայի առաջին բրի-
գադը: Այս բրիգադում մշտական աշխատող 40 կոմունար-
ների կազմին ընկնում է— բրիգադի, հաշվարկող, տնտես,
մթերք բերող, 2 խոհարարուհի և փայտ կտրող: Բացի դրան-
ցից, կան նաև պահապաններ և հովիվներ:

Իսկ ավելի ճիշտ կլիներ թողնել այդ բրիգադում մեկ
բրիգադի, մեկ հաշվարկող և մեկ խոհարարուհի:

Հիշած որինակները (իսկ այդպիսիները կարելի յե ավելի
շատ բերել) պարզ կերպով ցույց են տալիս, վոր մի քանի
կոլտնտեսությունների ղեկավարներն անպատասխանատու
կերպով են մոտենում իրենց ուժերի դասավորման և կոլ-
տնտեսականների աշխատանքի ոգտագործման, վորն, ան-
կասկած, այդ կոլտնտեսություններում պետության հան-
դես վերցրած պարտավորությունները ճիշտ ժամանակին
չկատարելու պատճառներից մեկն է հանդիսանում:

Նույն դրությունն է և աշխորերի հաշվելու հետ: Որի-
նակ, «Յերկրորդ հնգամյակ» կոլտնտեսությունում վարչա-
կան և սպասարկող կազմին հաշվում են բոլոր աշխորերի
քանակի 16—17%, վորն զգալիորեն բարձր է նորմալ
ծախսից (5—7%):

Վերև հիշած «Լենինյան ուղի» կոլտնտեսության բրի-
գադում 34 հոգի արտադրական աշխատողներ միջին հաշ-
վով վաստակում է յին 12,5 աշխոր, իսկ 17 հոգի սպասար-
կող կազմը—22 աշխոր: Այդ պատճառով զարմանալի է

61779-67



չե, վոր ցանի աշխատանքները հաջողութ՞յուն չէին նուս: Սպասարկող կազմին չափից ավելի աշխուրեը հաշվելը բացատրվում է նրանով, վոր այդ կատարվում էր առանց արտադրանքի վորեէ հաշվաւման, «աչքի չափով» դաշտային աշխատանքներին համար սահմանված գնահատումները բարձր:

Կոլտնտեսութ՞յան հետ անմիջապէս կապ չունեցող, այսպէս կոչված, հասարակական աշխատանքների համար հաշված աշխուրը, ներկայումս զգալիորեն պակասել են: Բայց և այնպէս վորոշ տեղերում գյուղխորհրդների հրդեհաշնչներէ, նամակատարների, սուրհանդակների և այլն ուղցրած կազմը աշխուրերի բաշխման մեջ մեծ տեղ և զբաղում: Տեղական և ռայոնական կազմակերպութ՞յուններից մի քանիսը, ինչպէս այդ տեղի յեր ունեցել Տագանքովի ռայոնում, պարտաւորեցնում են կոլտնտեսութ՞յուններին աշխուրեր հաշվել տխնիկական աշխատողներին (հովաքարարուհիներին, դպրոցների, հիվանդանոցների, գյուղխորհրդների պահապաններին և այլն):

Վարչական և սպասարկող կազմին, նույնպէս և կատարված հասարակական աշխատանքների համար աշխուրեր հաշվելու վերաբերմամբ կոլտնտեսային կազմա կերպութ՞յուններին տրված են հաստատ ցուցմունքներ. մասնաւորապէս Կոլտնտէկներոնը իր 1932 թ. փետվարի 2-ի Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսութ՞յուններում» վորոշման մեջ պարտաւորեցրեց կոլտնտեսութ՞յուններին աշխատելու, վոր վարչական սպասարկող կազմի վրա արվելիք ծախսի ընդհանուր գումարը բարձր չլինի ընդհանուր յիկամտի 1—2% ից խոշոր կոլտնտեսութ՞յուններում և 2—3% ից փոքր կոլտնտեսութ՞յուններում:

Յեթե հաշվի առնենք 1931—1932 թ. վականների փորձը, ապա ընդհանուր յեկամտի 1,5—3% ի սահմաններից դուրս չլալու համար, անհրաժեշտ է հաշվել վարչական և սպասարկող կազմին կոլտնտեսութ՞յան մեջ ծախսվող բոլոր աշխուրերի վոչ ավել, քան 5—7% ը, վորը շատ հեշտութ՞յամբ կարելի յէ հաջողացնել:

Այստեղից բղխում է հետևյալ լոգունը:

«Տնտեսելու համար մղվող պայքարը—դա կարևորագույն լոգունները մեկն է՝ նախ և առաջ վարչական ծախսերի գծով: Իսա այն գործնական խնդիրներից մեկն է, վորը մենք պիտի լուծենք, յեթէ իսկապէս ուղում ենք ձեռք բերել աշխատանքի արտադրողականութ՞յան զգալի աճը:»

(ՅԱԿՈՎԼԵՆՎ)

Նույն վորոշման մեջ մատնանշվում է, վոր սպասարկող կազմը (պահապաններ, հովաքարարուհիներ և այլն) չպիտի արտադրութ՞յան մեջ աշխատող բարեխիղճ կոլտնտեսականներին հաշված աշխուրերի $\frac{3}{4}$ -ից ավելի ստանան: Որինակ, պահապանը, վորի աշխատանքը վերաբերվում է I խմբին և վորի որական արտադրանքի նորման գնահատվում է 0,5 աշխուրերով, պետք է մի ամբողջ աշխատանքի համար,—պայմանով, վոր բարեխիղճ կերպով կատարված լինի նրա աշխատանքը, ստանա վոչ թէ 15 աշխուր, այլ լավագույն կոլտնտեսականների ամսական վաստակածի $\frac{3}{4}$ -ի չափ: Իսկ յեթէ պահապանն իր աշխատանքի մեջ բարեխիղճ չի յեղել, ապա ամսական աշխատանքի գնահատումը պիտի պակասեցնել:

Հաճախ մեծ թափով կոլտնտեսականներն զբաղված են լինում տնտեսական աշխատանքով, վորոնց հաշվում են աշխուրեր, առանց նրանց փաստորեն կատարած աշխատանքը հաշվառելու:

Սպասարկման աշխատանքների մեծագույն մասը կարող են կատարել կոլտնտեսականները, առանց աշխուրեր ստանալու: Վերցնենք, որինակի համար, բակի աշխատանքը: Ինչ՞եւ ձիապան—խարապանին կամ բակի պահապանին չի կարելի պարտաւորեցնել, վոր նա վոչ միայն հսկի բակում, այլ և խնամքով մաքրի բակը և չսպասի, վոր կարգազրոյ հատուկ կոլտնտեսական ուղարկվի բակի աղբը, կեղտոտութ՞յունը և այլն մաքրելու համար:

Կոլտնտեսութ՞յան չվերաբերվող աշխատանքների համար աշխուրեր վատնելու արգելման մասին, վճռական վորոշում է հանել 1932 թ. հոկտեմբերի 4-ին ՀԿ(բ) Կ Կենտրոնական

Վերահսկիչ Հանձնաժողովի վարչութիւնը և Բանգլուղտես-
չութեան Կոմիսարիատի Կոլլեգիան:

Այդ վորոշման մեջ ասված է.

«Վճռականապես արգելել ուսյոնական և գյուղական կու-
սակցական կազմակերպութեաններին կոլտնտեսութեաններին
հաշիւին անցկացնել պաշտոնյաներին, լիազօրներին և այդ
կազմակերպութեաններին կողմից գործուղված անձնավո-
րութեաններին վարձատրութեանը և առաջարկել կոլտնտե-
սութեաններին հաշիւով չկատարել կոլտնտեսային արտա-
դրութեան հետ (գյուղկատարածուներ, կոպերացիայի աշ-
խատողներ, գյուղխորհրդի անդամներ, յեթե նրանք չեն աշ-
խատում գյուղական տնտեսութեան մեջ, նամակատարներ և
այլն) առնչութեան չունեցող անձնավորութեաններին վար-
ձատրութեանը»:

«Պարտավորեցնել ուսյոնական և գյուղական կազմակեր-
պութեաններին խտրով կատարելու ՀԿ(Բ)Կ Կենտրոնական
Վերահսկիչ Հանձնաժողովի վարչութեան նվարտումն այն մա-
սին, Վոր հասարակական աշխատանքն ու տնտեսական-քա-
ղաքական կամպանիաները պետք է, վորպես կանոն, կա-
տարվեն կոլտնտեսականներին կողմից հասարակական բեռնվա-
ծութեան կարգով, առանց աշխօրեր հաշիւելու»:

Բացի դրանից, այդ վորոշման մեջ գործնական ցուց-
մունքներ են տրված ընդհանուր վարչական ծախսերի վե-
րաբերյալ:

«Ամուր կերպով անցկացնել այնպիսի կարգ, վորպեսզի
վարչական աշխատողներին համար սահմանված վարչական
ընդհանուր ծախսերի և աշխօրերի քանակի նախահաշիւ-
ներն անպատճառ հաստատվեն կոլտնտեսականներին ընդհա-
նուր ժողովում արտադրական տարվա սկզբին և, պահանջ
յեղած դեպքում, նույն կարգով վերաքննվեն»:

«Առանց կոլտնտեսականներին ընդհանուր ժողովի կողմից
հաստատված նախահաշիւները համարել անվավեր»:

«Կոլտնտեսականներին ընդհանուր ժողովում զինել բրիգադ-
ների ավերոգ ոժանդակիչ կազմի (բրիգադիւրների ոգնա-

կաններին, կալերի վարիչներին, ավագ խմբավարներին, ավերոգ
պահապաններին և այլն) վճռականապես կրճատման խնդիրը»:

Բանվորա-գյուղացիական Տեսչութեան Կոմիսարիատի
Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի բոլոր այդ գործ-
նական ցուցմունքները պետք է անմիջապես իրագործվեն:
Դա կանանսի զգալի չափով աշխատող ձեռքերի քանակը ար-
տադրական աշխատանքի համար և միաժամանակ կլրճատի
աշխօրերի ծախսումը կոլտնտեսութեաններում, վորն զգա-
լիորեն կբարձրացնի նրանց արժեքը և ավելի հետաքրքրու-
թեան առաջ կբերի գեպի աշխատանքը կոլտնտեսականներին
կողմից:

ՎԵՐՋ ՏԱԼ ՈՐԱՎԱՐՁԻՆ

Կուսակցութեան Կենտկոմի (1932 թվի փետրվարի 4-ի)
«Կոլտնտեսութեաններին կազմակերպչական—տնտեսական
ամբապնդման հերթական միջոցառումների մասին» վորոշման
մեջ ասված է.

«Իրձավարձն արմատավորելու, ախաւսանքի հաւաքման
բարելավման յեւ յուրաքանչյուր կօյնցեւեականքի բուս արտա-
դրանքի բանակի յեւ վորակի ախաւսանքի գնահատման մասին
խորհուրդների VI համագումարի վորոշումները իրականացնե-
լը Եարուճակում է մնալ, վորպես կարելի յարգույն խնդիր»:

Չնայած այդ նախագրուչացման, շատ կոլտնտեսու-
թեաններում մինչև այժմ գործավարձի չեն անցկացրել այն
աշխատանքները, վորոնք կարող էյին անցկացվել: Առանձ-
նապես դա վերաբերվում է այնպիսի աշխատանքներին,
ինչպեսին են՝ անասնաբուժական, տնտեսական աշխատանք-
ները և վարչական ու սպասարկող կազմի աշխատանքները:
Այդ աշխատանքներում շարունակվող ամենափասակար որա-
վարձը վոչ միայն իջեցնում է աշխատանքի արտադրողա-
կանութեանը և կոլտնտեսականներին լավ աշխատելու ցան-
կութեանը, այլ և խթան է հանդիսանում ուրիշ աշխատանք-
ների գործավարձի անցկացնելուն:

Կոլտնտեսությունների ղեկավար աշխատողներից մի քանիսը, ծածկվելով որավարձի տակ, կամ «իրենց» գործերն են տեսնում, կամ, առհասարակ, վոչինչ չեն անում: Վերջինների շարքին կարելի չե դասել Ֆրունզեյի անվան կոմունայի առաջին բրիգադի բրիգադիրին, վորի ղեկավարությունը կայանում ե նրանում, վոր նա գտնվում ե աշխատողների մոտ և որական անում ե 2 կամ 3 կարգադրություն: Նա ամբողջ ժամանակ կամ շրջում եր պարտիզում և մրգեր վնտում, կամ նստում եր գրասենյակում: Նույն ժամանակ վարելատեղում կարելի չեր դիտել խայտառակ դրության, յերբ տնհատական որավարձով աշխատող վարողները (յուրաքանչյուրն առանձին հողամասով) վոչ կանոնավորված գութաններով վիչացնում եյին հողը: Նույնը կարելի չե ասել «Սվորտնի տրուդ» կոլտնտեսության (Անապի ռայոն) տնտես Ծրանգաֆիլովի մասին, վորի աշխատանքը կայանում եր նրանում, վոր որական 20—30 բուսե յեր ծախսում խարապաններին կերեր տալու վրա:

Յեսեսնտուկի ռայոնի «հունվարի 9-ը» կոլտնտեսության կոլտնտեսականները արդարացի կերպով գանգատվում եյին վարչության անդամների և բրիգադիրների վրա, վորոնք աշխորեր եյին հաշվում իրենց, ուշադրություն չգարձնելով վոչ յեղանակի, վոչ հանգստի որերի և վոչ ել, մանավանդ, արտադրական պլանների և առաջադրությունների կատարման վրա:

Որավարձի մնացորդներին կոլտնտեսություններում վերջ տալու համար, չի կարելի սահմանափակվել միայն ցանկություններով: Պետք ե համառ և հաստատ կերպով գործավարձի անցկացնել՝ կոլտնտեսության բոլոր աշխատանքները կատարող կոլտնտեսականներին աշխորեր հաշվելով՝ ըստ նրանց կատարած աշխատանքի քանակի և վորակի:

1. Իրա համար պետք ե առանձին տնտեսական աշխատանքներով, որինակ՝ կերերի տեղափոխություն, բակերի աղբի և կեղտոտության մշտական մաքրում և այլն,— ծանրաբեռնել պարտադիր կերպով այն կոլտնտեսականներին,

վորոնք լրիվ կերպով չեն ծանրաբեռնված իրենց հիմնական աշխատանքով: Մնացած աշխատանքների համար անմիջապես նորմաներ սահմանել և դնահատել աշխորերով, վորպետքի ետադաշում աշխորեր հաշվել միայն կատարված աշխատանքի քանակի և վորակի համար, այլ վոչ թե աշխատանքում գտնված որվա համար:

Ղեկավար կազմի—վարչության անդամների, ֆերմաների վարիչների, բրիգադիրների համար անհրաժեշտ ե յուրաքանչյուրի համար առանձին վորոշել պարտականությունների սահմանաշրջանը, այն հաշվով, վորպետքի լիովին ծանրաբեռնված լինեն աշխատանքով: Կատարել հանձնարարված աշխատանքների կատարման ամսական կամ գուրդատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանային ստուգումներ: Համաձայն կատարած արտադրական առաջադրությունների աշխորեր հաշվել: Որինակ՝ բրիգադիր Իվանովին հանձնարարված ե գարնանացանի աշխատանք, վորը նա պարտավոր ե կատարել մինչև ապրիլի 30-ը: Յեթե բրիգադիրն իր անկարող ղեկավարությամբ ձգձգեց ժամկետը, որինակ, 5 որով, կամ 20% -ով և մինչև ապրիլի 30-ը, նրան հասանելիք աշխորերը, բրիգադի փաստացի աշխորվա համար 1,25 աշխորի հաշվով (դուրս գալով հանգստի որերը), պետք ե իջեցվեն 20% -ով: Յեվ, ընդհակառակն, ավելացվեն, յեթե բրիգադն իրեն հանձնարարված աշխատանքը կատարել ե:

Սակայն ժամկետից առաջ կատարած աշխատանքների համար հավելյալ աշխորեր պետք ե հաշվել միայն այն դեպքում, յեթե այդ աշխատանքները կատարված են համաձայն ազրոտեխնիկական բոլոր պահանջների և ունեն լավ վորակ:

3. Բոլոր արտադրական աշխատանքները նույնպես անցկացնել գործավարձի, ոգտվելով տվյալ բնագավառում աշխատող կոլտնտեսականների հատուկ գործնական ցուցմունքներով, պրակտիկայով և խորհուրդներով: Իրա համար պետք ե ապահովել նրանց լայն մասնակցությունը—աշխատանքա-

յին պլանի, արտադրանքի նորմաների, աշխուրհով աշխատանքի գնահատման և այլն խնդիրների մշակման և քննարկման ժամանակ:

ՎԵՐԱՑՆԵԼ ՀԱՎԱՍԱՐԱՆՔԸ

Որավարձից պակաս չարիք չե նաև աշխորի ապահովման գործում կուլակային հավասարանքը—խմբովին աշխատած աշխորերի հավասար բաժանումը բոլոր մասնակցողներին մեջ, անկախ յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի արտադրանքի և վորակի հաշվառումից: Վորպեսզի թույլ արտադրանքի և վորակի հաշվառումից: Վորպեսզի թույլ տան առանձին աշխատասեր կոլտնտեսականներին «հարստանալու» աշխորերով, Միկոլյանի անվան կոլտնտեսության (կուրգաննիվսկու ուսյոն) վարչության աջ ուղորտունիտները շարքահերկերի քաղհանին իրար կողքի եյին կանգնացնում 50 և ավելի կոլտնտեսականներ, իսկ այդ խմբի աշխատանքների համար հաշված աշխորերը բաժանում եյին այդ աշխատանքին մասնակցողների մեջ հավասար:

Մյուս կոլտնտեսություններում, մասնավորապես «Վտորայա Պյատիեակա» կոլտնտեսությունում կուլակային բաժանում եյին կատարում, պատճառաբանելով, վոր բրիգադը «ժամանակ չունի» կոլտնտեսականներին դասավորելու աշխատանքների վրա և նրանց անհատական արտադրանքը հաշվառման յննթարկելու: Իսկ միևնույն ժամանակ հաշվարարները, վորպես կանոն, բոլորովին դաշտում չեյին յերևում և բրիգադիդներն ել միայն յերբեմն եյին յերևում:

Կուլակային հավասարանքի հետևանքով աշխատանքի գուրս գալը առաջին կոլտնտեսությունում 40% -ից բարձր չեր, իսկ յերկրորդում 10%: Աշխատանքի գուրս յեկողներն ել հավասարվում եյին վոչ թե լավագույններին, այլ թույլերին, հիվանդներին, ծուլներին, կատարելով արտադրանքի նորման 50 և ավելի պակաս սուկոտով: Իսկ գեպի կոլտնտե-

սականների արդարացի պահանջներն—աշխորերը հաշվել արտադրանքի քանակի և վորակի համաձայն, ունեցած զնասարարական և անպատրասխանատու վերաբերմունքի հետևանքով, շարքահերկի մեծագույն մասը փչացավ մոլախոտերից, վորն, անկասկած, պակասեցրեց աշխորի արժեքը:

Կոլտնտեսությունում տեղի ունեցող կուլակային հավասարանքի հետ, վորը խեղաթյուրում և գործավարձի հիմնական սկզբունքը, ըստ վորի աշխորերը հաշվվում են միայն կոլտնտեսականի կատարած աշխատանքի վորակի և քանակի համաձայն, առանձին կազմակերպություններ թույլ են տալիս շեղումներ, այսինքն՝ պարտավորեցնում են կոլտնտեսություններին գործավարձ մտցնել այն աշխատանքներում, վորի պայմանները թույլ չեն տալիս այդ անելու: Այսպես, որինակ, նախկին Պոլտավսկու ստանիցայի կուսակցական կոմիտեյի քարտուղար Սիլչենկոն, վորը դավաճանեց կուսակցական շահերին, պարտավորեցրեց բոլոր կոլտնտեսություններին վարի համար գործադրել անհատական գործավարձ, այսինքն՝ ամեն մի գուլթանին հատկացնել առանձին հողամաս: Այդպիսի գործավարձի հետևանքով ստացվեց հետեյալը. ամբողջ դաշտը բաժանվեց առանձին հողամասերի և յուրաքանչյուր 10—15 մետրի վրա—ակոս: Վարած հողը տափանվում եր միայն այն ժամանակ, յերբ բոլոր գուլթաններն անցնում եյին բավականաչափ շարքեր, վորպեսզի հնարավորություն լինի տափանելու, իսկ տափանման ուղացումից չորանում եր հողը, այսինքն՝ վարելու ամբողջ աշխատանքը կատարվում եր զնասարար կերպով:

Այս որինակը ցույց ե տալիս, վոր յերբեմն տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները, փոխանակ ղեկավարելու կոլտնտեսությունները և ողնուտե նրանց կարգավորել խմբակային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր կոլտնտեսականի արտադրանքի հաշվառումը, խառնվում են կոլտնտեսությունների արտադրողականության գործին և սոսկ վարչական ձևով ինքնե-

ըբ խախտում են կուսակցութեան և կառավարութեան դի-
րեկտիվները, առաջարկելով անհատական գործավարձ մտցը-
նելու այն աշխատանքներում, վորոնց պայմաններում դա
հնարավոր չե:

Դրա հետ միասին չի կարելի թույլ տալ և այնպիսի
գեպքեր, ինչպես դրանք տեղի ունեցան «Նովայա ժիզն»
կոլտնտեսութունում (Գելենշիկի ռայոն), ուր կուլակային
միտուցներով սահմանեցին, վորպես նորմա, 250 աշխոր:
Վորոշեցին դրանից ավելի վոչ վոքի չհաշիւել: Այդ պատ-
հառով կոլտնտեսական Պոնամարինկոյին, վորն վաստակել
եր 3 աշխոր և մի շարք ուրիշներին հեռացրին բոլոր աշ-
խատանքներից ամուլա կեսին, հենց բերքահավաքի ժա-
մանակ: Այդպիսի սահմանափակումը ձեռնտու յե միայն
գասակարգային թշնամի—կուլակին, վորովհետեւ դա հե-
ռացնում է արտադրութունից ամենապատասխանատու
մոմենտին հարվածային կոլտնտեսականների լավագուշն
մասը:

ԱՇԽՈՐԵՐԸ ՀԱՇՎԵԼ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՆԱԿԻ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Կոլտնտեսականներին որավարձի և հավասարանքի հի-
ման վրա աշխորեր հաշիւելը հսկայական ֆլաս է բերում,—
իջեցնում է աշխատանքի վորակը, թուլացնում է աշխա-
տանքի դիսցիպլինան: Հենց դրանով էլ հսկայական վնաս
է հասնում կոլեկտիւիզմի կազմակերպչական օճեստա-
կան ամրապնդման գործին:

Կոլտնտեսութունների հաշիւտարական ապարատի ադ-
տեղված լինելը՝ այնտեղ սողոսկած, դասակարգայնորին
թշնամի տարրերով, մի քանի կոլտնտեսութունների դե-
կավարների կողմից հաշիւառքի նշանակութեան թերազնա-
հատումը, հաշիւառքի դժվարութիւնները հաղթանարելու
ցանկութեան բացակայութիւնը—այս բոլորը խճճում է
հաշիւառքը: Սա առիթ է տալիս մտածելու, վոր իբր թե

հնարավոր չե հաշիւի առնել յուրաքանչյուր առանձին կոր-
տնտեսականի արտադրութիւնը: Մի քանի կոլտնտեսութուն-
ների ղեկավարները հրաժարվում են գործավարձից, հրա-
ժարվում են կատարված աշխատանքի քանակի և վորակի
համաձայն յեկամուտները ճիշտ բաշխելուց: Դրանով նրանք
ողնում են դասակարգային թշնամուն և նրա գործակալու-
թեան—Չարդված, բայց դեռևս բոլորովին չջախջախված
կուլակութեան՝ խանդարելու կոլտնտեսութիւնների կազ-
մակերպչական-տնտեսական ամրապնդման:

Այնտեղ, վորտեղ չի կազմակերպված արտադրութի ջա-
նակի ու վորակի հաշիւառքը, այնտեղ տիրում է կուլակա-
յին հավասարանքը, այնտեղ ծուլներն ու կորզիչները հը-
նարավորութիւն ունեն ապրել կոլտնտեսութիւնների
հաշիւին:

Մինչդեռ կոլտնտեսութիւնների մի զգալի մասը միան-
գամայն հաջող կերպով գլուխ է բերել գործավարձն ար-
մատավորելու և յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի
արտադրութիւնը հաշիւի առնելու խնդիրները:

Դրանով կոլտնտեսութիւններն իրենց արտադրական
գործունեութեան ընթացքում հսկայական նվաճումներ են
ձեռք բերել:

Դա հաստատվում է «250» մրցող բրիգադներից առա-
ջավորների փորձով: Որինակի համար, Ստալինի անվան
կոմունայի (Տացինսկու ռայոն) Ռիբաչենկոյի բրիգադը
1,059 հեկտար ցանքը կատարեց 12 որում, փոխանակ պլա-
նով նախատեսված 18 որվա: Ցանքի վորակը համապա-
տասխանում էր ազրոտեխնիկայի բոլոր պահանջներին:

Իսկ ինչպես գործնականում հաշիւի առնել յուրաքան-
չյուր կոլտնտեսականի արտադրութիւնն այնպիսի աշխա-
տանքներ կատարելիս, վորոնց կատարման համար մի քա-
նի մարդ է հարկավոր:

Վորպես որինակ՝ վերցնենք վարելու աշխատանքը:
Արտադրութի հաշիւառքը թեթևացնելու համար հարկավոր
է, վոր խմբակները չափից դուրս մեծ չլինեն: Իսկ յեթե

